Կուպ դև կինաց, մտաւ մղաղէն (շատ մեծ էր. կ'ըլլը, որ տաս խաղար ոխչար լցիս, հալա լիք չ'էնը)։

Ինչ խասաւ վեար տուան, էնուր խուտն առից. էսաց.—Վա՜յ, էսի Բաղդասարի խուտն ի, էկաւ կ'սպանը. Սասմայ տան խուտն ը։

Գլեոխ տրից յախու, պառկաւ խիւանդ։

Էդ էլ էսաց.—Դև, ի՞նչ կ'խեծաս։

Էսաց.—Արիւու յէռջիւ շատ իմ քնի, գլեոխս կ'ցաւը, կ'խեծամ։

Էսաց.—Մը՛ խեծա, տիւ սուտ խիւանդ իս։

Էսաց.—Իլի թըդարիք տիս, կռուինք։

Էսաց.—Իս կռիւ չըմ էնի (զատնու զքեարով մընակ կռիւ կ'անէր, թուր չունէր)։

Դաւիթ ընկաւ միտ, էսաց.—Իմ խէր ընձը վոսիաթ էրի,—յիշա՛ իմ խացն ը գինին, Ցէր կենդանին, Մարուքթայ բանձր Աստուարածին, խաչ պատրազին վեար իմ աջ թիւին։

Դև էլաց, էսաց.—Ցիւ յիշացիր խացն ու գինին, տիւն Բաղդասարի տղէն իս։

Էսաց.—Իս չիմ Բաղդասարի տղէն, իս Մհերն իմ, Դաւթի տղէն։

Ինչ էսաց՝ Դաւթի տղայ Մհերն իմ, դև վի՛ կանգնաւ. իրիք սհաթ կուրտան իրարու խիտ. էզար, զկուպ դիւու գլեոխ կտրից։

Խասաւ էնդեղ, էդա քեառսուն տ'սպանէր։ Շիւրիր խանին, տեսաւ, որ աղջիկ ին. ամէն իրանց խէրանական անուն տուին,—ամէն մէկ թագաւուրի աղջիկ ին։

Առից զքեառսուն աղջիկ, առից զկուպ դևու գլեոխ, առից, իպի, իտու Բաղդատայ թագաւորին, էսաց.—Քիւ դիւշման սպանը ը, արխային թագաւուրութին էրա։

Էսաց.—Որ տիւ սպանիցը, թագաւուրութիւն քիւն ը, քի վայել ի։

Էսաց.—Զէ՛, իս Դաւթի տղէն Մհերն իմ, իս չիմ կէրի էստեղ նստը. նեա ժառանգ կայ ընձը, նեա մախ ունիմ։

—Աբա, ի՞նչ կ'ուզիս, ասա՛ տամ։